Արձանագրություն N 2/1

ՀՀ վերահսկիչ պալատին անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումը ապահովող հանձնաժողովի նիստի

02.04.2016թ.
Ժամը՝ 16 [30]

Մասնակցում էին՝

Ն.Սահակյանը (հանձնաժողովի նախագահ)

Գ.Զոհրաբյանը, (հանձնաժողովի քարտուղար)

Մ. Սաֆարյանը,Դ. Ղազարյանը, Է. Գյոժգյանը և Ա.Լալայան (հանձնաժողովի անդամներ):

Օրակարգ՝

- «ՀՀՎՊ-ՇՀԾՁԲ-15/2» ծածկագրով համաձայնագրի շրջանակներում ընտրված մասնակցից ավիատոմսեր ձեռքբերելու մասին
  - Զեկ. Ն. Սահակյան(հանձնաժողովի նախագահ)
- Օրակարգը հաստատվեց միաձայն

Հանձնաժողովի նախագահ տկն Սահակյանը իրազեկեց, որ երեկ գիշերը Ադրբեջանը, իրեն հարող Լեռնային Ղարաբաղի ամբողջ սահմանով, պատերազմական գործողություններ է ծավալել և այդ կապակցությամբ Արցախ է մեկնել Վերահսկիչ պալատի նախագահ պրն Ի. Զաքրյանը՝ մի շարք պատասխանատու աշխատակիցների հետ: Այդ պատճառով նախագահ և նրա օգնականը վաղըՄյունխեն չեն կարող մեկնել, կուղևորվի միայն ՄՄԿ վարչության պետ Կ. Առուստամյանը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀՎՊ-ԲԸԱՀԾՁԲ-15/2 ծածկագրով ընթացակարգի իրականացմամբ, (մեկ չափաբաժնով) «Էկոնոմ» կարգի 3 հատ ավիատոմսի ձեռքբերման համար, Ընտրված «Սարյան 1 Թրեվլ Քլաբ» ՍՊ Ը հետ 3 հատ «էկոնոմ» կարգի ավիատոսի ձեռքբերման փոխարեն պայմանագիրը կնքել 1 հատի համար:

3.Հաստատել ավիատոմսերի և ավիասպասարկման ծառայությունների ձեռբերման վերաբերյալ «Սարյան 1 Թրեվլ Քլաբ» ՍՊԸ հետ պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը (կցվում է) :

3.Հանձնարարել հանձնաժողովի քարտուղար Գ. Զոհրաբյանին.

ա/ Էլփոստով ««Սարյան 1 Թրեվլ Քլաբ» » ՍՊԸ իրազեկել այդ մասին և վերոնշյալ ընկերությանն ուղարկել կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացնել հաստատման, ինչպես նաև կնքված պայմանագրի մասին հայտարարությունը տեղադրել կայքում:

Որոշումներն ընդունվել են միաձայն

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Զոհրաբյան

Հանձնաժողովի անդամներ Մ. Սաֆարյան

Դ. Ղազարյան

Է. Գյոժգյան

Ա. Լալայան